



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ  
ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

**ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔ**

Հետազոտության թեման՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը  
մաթեմատիկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Մաթեմատիկա

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Ալավերդյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ.175 միջնակարգ դպրոց

**Երևան 2023**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողների արժեհամակարգի վրա ազդող գործոնները.....	5
2. Մաթեմատիկայի դերը որպես արժեհամակարգի լիարժեքության ձևավորման միջոց.....	9
Եզրակացություն.....	14
Օգտագործված գրականության ցանկ.....	16

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Արժեհամակարգը դա այն չափանիշներն են, որ մարդը ունի ելնելով իր աշխարհի ընկալումից: Արժեհամակարգը ձևավորվում է հասարակության սովորություններից, մարդու

կրթությունից կենսավորած և հավատփից: Մարդու արժեքները բավարարում են իր պահանջները և իմաստավորում է կյանքը: Մարդու արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ՝ արժեհամակարգ:

Մաթեմատիկայի դասավանդման արդյունքում ձևավորվում է համապատասխան արժեհամակարգ՝ պայմանավորված առարկայի դասավանդման մեթոդով՝ ինչպես նաև առարկայի առանձնահատկություններով: Այդ արժեհամակարգը դասավանդման ընթացքում ուսուցչի կողմից կիրառած ջանքերի արդյունք է:

Մաթեմատիկական կրթության հիմնական խնդիրը պետք է լինի առարկայի ուսուցման միջոցով արժեհամակարգ ձևավորելը:

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում սովորողների մոտ առաջանում է հետաքրքրասիրություն, մտքի խորաթափանցություն, ֆիզիկական, մտածողական արամաբանություն: Մաթեմատիկայի ուսուցման գործընթացը նպաստում է կամային որակների ձևավորմանը:

Սովորողը ուսումնասիրելով մաթեմատիկական պետք է գիտակցի թվի դերը տնօրյա կյանքում, ֆունկցիոնալ առնչությունը իրական կյանքում, կարևորի հավասարության և անհավասարության դերը իրական կյանքում, կարևորի ընդհանուրից մասնավորի և մասնավորից ընդհանուրի անցնելու նշանակությունը: Պետք է կարողանա մտքերը ճիշտ և հստակ ձևակերպել և ուրիշի մտքերը գնահատել, հարցերի ֆինարկման ժամանակ լինել օբյեկտիվ, արագ կողմնորոշվել, ցուցաբերել հնարամտություն և մտքի ֆիզիկականություն:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մաթեմատիկայի դասավանդման ընթացքում:

Նշված նպատակն իրագործելու համար աշխատանքի հիմքում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել սովորողների արժեհամակարգի վրա ազդող գործոնները,
- ներկայացնել մաթեմատիկայի դերը որպես արժեհամակարգի լիարժեքության ձևավորման միջոց:

Աշխատանքի մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Աշխատանքում առաջադրված խնդիրների լուծման համար մեթոդական հիմք են ծառայել մի շարք հեղինակների կողմից իրականացված հետազոտությունները, կրապարակված գիտական աշխատությունները և դրանցում ներկայացված տեսակետները:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Աշխատանքային տեխստը կազմում է 16 տպագրական էջ:

## Գլուխ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

<<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմաղմանի ձևավորման և զարգացման համար:

Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու <<արժեհամակարգ>> հասկացությունը նաև գուրկ է խիստ որոշակի ստուգությունից:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ հանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:

Այսօր անող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ <<տեղեկատվական աղբյուրներից հոսող>> հերոսների վարքագծում:

Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը:

Ներկայումս կրթությունը վերահել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ<sup>1</sup>:

<sup>1</sup>Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., էջ 24:

Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Արժեքային կողմնորոշումն անհատի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչն է: Զարգացած արժեքային կողմնորոշումը անհատի հասունության նշան է, նրա սոցիալականության ցուցանիշը: Արժեքային կողմնորոշումներից է բխում նաև անհատի ապրելակերպը: Կյանքը արընթաց առաջ է շարժվում: Գլուբալացման գործընթացը կրթության համակարգի առջև նոր մարտահրավերներ է առաջադրում: <<Տեխնոգեն հասարակությունը և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մուտքը նոր չափանիշներ են պահանջում, որոնք տարբերվում են երեկվա չափանիշներից: Ինչպիսի՞ն կլինի կրթությունը, ապագայի կրթությունը: Այսօր աշխարհը նոր կրթական մոդելներ է փնտրում: Ովքե՞ր կձևավորեն այն առանցքը, որով հնարավոր կլինի դիմագրավել ժամանակի փոփոխություններին>><sup>2</sup>:

Ժամանակի հրամայականով այսօր նոր կրթակարգ ստեղծելու աշխատանքներ են տարվում: Արդեն պատրաստ է և ֆինանսական փուլում է <<Ազգային կրթակարգի>> նախագիծը, որում ամրագրված են ֆանդմեկերոպ դարի ֆաղափացու արժեհամակարգի բաղադրիչները: Խնդիր, որին ուղղված են կրթության հիմնախնդիրներով շահագրգիռ բոլոր մասնագետների ջանքերը: Այդ փոփոխությունը, ըստ էության, ձևավորում է մեր ապագան: Դա կլինի մի նոր փաստաթուղթ, պայմանագիր՝ այսօրվա ֆաղափացու և վաղվա ֆաղափացու միջև: Այն կլինի սոցիալական պայմանագիր, կրթության բարելուխման գործիք:

Հայաստանի Հանրապետությունում գործող պետական չափորոշիչը թեև որոշակիորեն արտացոլում էր միջազգային փոքրում առկա նմանատիպ փաստաթղթերի սկզբունքները, սակայն ուներ կառուցվածքային, սկզբունքային և բովանդակային մի շարք բացթողումներ, որոնք խոչընդոտում էին **Պանրակրթության** արդյունավետ կազմակերպումը:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և իրախուսելի չափանիշներին:

---

<sup>2</sup>Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, <<Մանկավարժություն>> գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2, էջ 6:

## Գլուխ 2. ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԼԻԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսուցչի մասնագիտական պատրաստվածության և ուսուցման ժամանակակից մեթոդների իմացությամբ և դրանք ֆիզո կիրառելու հմտությամբ և դրանք ֆիզո կիրառելու հմտությամբ է պայմանավորված ոչ միայն աշակերտի կրթվածության ցուցանիշը, այլև նրա արժեհամակարգի ձևավորումը և մարդկային դրական որակների ձեռքբերումը:

Ուսուցման մեթոդները, ձևերն ու տեսակները հնարավորություն են տալիս ապահովվելու ուսուցչի առջը դրված այս խնդիրները, ուստի ուսուցիչը պետք է ֆաջատեղյակ լինի ուսուցման ժամանակակից մեթոդներին և կարողանա դրանք ֆիզո կիրառել:

Ուսուցումը ստեղծագործական երևույթ է՝ ինֆնատիպ, չկրկնվող մեթոդներով, հաճախ անսպասելի ընթացքով ուղեկցվող, պահի թելադրանքով պայմանավորված մոտեցումներով, ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործողությունների համակարգով նպատակին հասնելու միջոց է<sup>3</sup>:

---

<sup>3</sup>Հարությունյան Ն. Կ., Հայ մանկավարժական հանրագիտարան, հ.1, «Հայ մանկավարժության նշանավոր դեմքերը», Երևան, 2007թ., էջ 35:

Մաթեմատիկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ինֆորմալյունություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների ձևավորման գործում մեծ դեր և նշանակություն ունեն ընտրված ուսուցման մեթոդները:

Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկան հենվում է որոշակի սկզբունքների վրա, որոնք չպետք է շրջանցել: Օրինակ, խոսքի մասերը պետք է անցնել ըստ ընդունված հերթականության: Հնչյունաբանությունը, բառագիտությունն ու ձևաբանությունն ու շարահյուսությունը նույնպես ուսուցանվում են հաջորդաբար, բայց փոխադարձ կապի մեջ:

Մեթոդիկայի պահանջներից մեկն էլ տեսական գիտելիքների և գործնական աշխատանքների փոխադարձ կապի ապահովումն է, որ մեծապես նպաստում է աշակերտի լեզվական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը, իսկ արդյունքը չափվում է նրա բառապաշարով, ֆերականական ձևերի նիշտ գործածությամբ, ուղղագրության ու կետադրության անխալ իմացությամբ, լեզվաոճական միջոցների հանաչմամբ ու գնահատմամբ:

Դասավանդման մեթոդիկայի հիմքում ընկած են նաև հոգեբանական գործոններ, որոնք պետք է կարևորի և նրբանկատորեն հաշվի առնի ուսուցիչը: Հանձին յուրաքանչյուր աշակերտի՝ ուսուցիչը պետք է տեսնի տարբեր բնավորությունների տեր, զգայուն ու փխրուն արարածների, որոնց նկատմամբ անզգույշ կամ կոպիտ մի ֆայլը կարող է հանգեցնել անցանկալի, անգամ հակասագրական հետևանքների:

Ուսուցման բազմաթիվ մեթոդների շարքում հետաքրքիր են միջառարկայական կապերը: Մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում առարկաների և գիտությունների համագործակցությունը՝ միջառարկայական կապերը<sup>4</sup>:

Մաթեմատիկայի դասաժամերին ուսուցումը պետք է կազմակերպել այնպես, որ կատարելագործվեն սովորողների աշխատանքային ունակությունները, զարգանան երեխաների մտածողությունը, կոնստրուկտորական ունակությունները, տարածական պատկերացումները, ստեղծագործական մտածողությունը և այլն:

Դասաժամերի մեծ մասը պետք է կազմակերպել մյուս առարկաների հետ օրգանական կապի մեջ, որը հնարավորություն կտա զարգացնելու սովորողների տարբեր որակներ:

Նաև շատ կարևոր է մյուս առարկաների համար՝ կապը մաթեմատիկայի հետ<sup>5</sup>: Մաթեմատիկայի դպրոցական ծրագրերը ժամանակ առ ժամանակ ենթարկվում են փոփոխությունների. որոշ թեմաներ ավելացվում են, որոշները հանվում, փոփոխվում է մատուցման լեզուն, մեթոդիկան: Սակայն կա բովանդակային միջուկ, որն անփոփոխ է մնում, և որի շուրջ կառուցվում է ծրագիրը<sup>6</sup>:

<sup>4</sup>Նիկոլսկի Ս. Մ., Պոտապով Մ. Կ., Ռեբեկոնիկով Ն. Ն., Շեվկին Ա. Վ., «Հանրահաշիվ 7», «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2016թ., էջ 57:

<sup>5</sup>Ավետիսյան Ռ., «Հանրահաշիվ 7-9» ուսուցչի ձեռնարկ, «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2011թ., էջ 54:

<sup>6</sup>Князева В.В., Педагогика / В.В. Князева. – М.: Вузовская книга, 2016, էջ 57:



Միջառարկայական կապերի ինտեգրումը մաթեմատիկայի դասաժամերի ընթացքում ուսուցչին հնարավորություն է ընձեռում լրացնել աշակերտների գիտելիքների պակասը՝ պատմությունից, հայրենի բնությունից, երաժշտությունից ու նկարչությունից:

Ուսուցման այս ուղղվածությունը նպաստում է աշակերտների բազմաբնույթ մտածողության զարգացմանը: Նրանց առջև լայն հնարավորություն է ստեղծվում առարկաների միջև առկա կապերի ցուցադրմամբ հաղորդակցվել գիտության ու կյանքի տարբեր բնագավառների զանազան երևույթներին, պատճառահետևանքային կապերին և օրինաչափություններին: Այդ հանապարհով նրանք աստիճանաբար վարժվում են ինֆորմայն աշխատանքի, որը կարևոր ուղեցի է դառնալու՝ նրանց հետագա ամբողջ կյանքի ընթացքում շարունակական կրթության խոչընդոտները հաղթահարելու, ինֆորմայն ուսուցման, կատարելագործման ու բազմակողմանի զարգացման առումով:

Միջառարկայան կապերի շնորհիվ առավել մատչելի ու դյուրին է դառնում նոր նյութը ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար առարկաների ուսուցման դեպքում: Զարգացնում է սովորողի մի շարք կարողություններ, հատկապես մտածելու և տրամաբանելու տարատեսակ կարողությունները:

Ուսուցման գործընթացում աշակերտների գործունեության և պահանջմունքների, նպատակների, հետաքրքրությունների համապատասխանությունից կախված, նյութը և մեթոդներն ընտրելիս անհրաժեշտ է մշտապես հաշի առնել տվյալ դասարանը, նրա առանձին խմբերը կազմող աշակերտների հնարավորությունները, պահանջմունքները, շարժախիթները և հետաքրքրությունները:

Ներկայացնենք դասի պլան նմուշ օրինակ.

Առարկան՝ <<Հանրահաշիվ>>

Թեմա՝ <<Բազմանդամների արտադրյալ>>

Դասարանը՝ 7 -րդ

Կիրառվող մեթոդը՝

- ցուցադրա - բացատրական,
- հարցադրումների մեթոդ,
- աշակերտներն են վարելու ողջ ընթացքը:

Դասի նպատակը՝

Աշակերտը կսովորի.

- բազմանդամների բազմապատկման հաշվեկանոնը,
- հետոքեն գծագրել գրաֆիկները,
- լուծել դասագրքում առկա վարժությունները:

Կկարողանան.

Կիրառել բազմանդամների բազմապատկման հաշվեկանոնը:

Կարժևորի.

Բազմադամների բազմապատկման հաշվեկանոնի կիրառումը ֆառանկյունների մակերեսները հաշվելիս:

Անհրաժեշտ պարագաներ (ցուցադրական նյութեր)

- համակարգիչ,
- պրոյեկտոր,
- գունավոր գրիչներ,
- գունավոր կալիբրներ,
- ավագե ժամացույցներ:

Հիմնական հասկացություններ

Միանդամ, բազմանդամ, արտադրյալ, բաշխական օրենք, երկրաչափական իմաստ:

Դասի ընթացքը.

- Անդրադարձ նախորդ դասի հարցերին:
- Կվերիիւեէն միանդամների տեսքը, բազմանդամների տեսքը, բաշխական օրենքը գումարի և տարբերության նկատմամբ՝ թվերի օրհակներով:

Խթանման փուլի նկարագրությունը.

Միանդամի և բազմադամի բազմապատկման տրված օրինակում միանդամը մասնատել և դարձնել 2 միանդամներ գումար, գործողությունները կատարել նաև այդ տեսքով: Հարցնել թե ի՞նչ ենք նկատում:

Իմաստի ընկալման փուլի նկարագրություն

Ցույց տալ թե ինչպե՞ս ենք կիրառում բազմապատկման հաշվեկանոնը: Բացատրել նաև երկրաչափական իմաստը:

Կռռադատման փուլի նկարագրությունը

Գունավոր գրիչներով և կալիբրներով սլաֆների օգնությամբ կատարել դասագրքի 125 և 126 վարժություններից մի քանի օրինակներ:

Գնահատել առաջադրանքներում միավորներ վաստակածներին:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՈւսումնաԱիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ այսօր անող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով

բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերաբերյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

- Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:
- Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառայում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը:
- Մաթեմատիկայի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների ձևավորման գործում մեծ դեր և նշանակություն ունեն ընտրված ուսուցման մեթոդները:
- Մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկան հենվում է որոշակի սկզբունքների վրա, որոնք չպետք է շրջանցել: Օրինակ, խոսքի մասերը պետք է անցնել ըստ ընդունված հերթականության: Հնչյունաբանությունը, բառագիտությունն ու ձևաբանությունն ու շարահյուսությունը նույնպես ուսուցանվում են հաջորդաբար, բայց փոխադարձ կապի մեջ:
- Մեթոդիկայի պահանջներից մեկն էլ տեսական գիտելիքների և գործնական աշխատանքների փոխադարձ կապի ապահովումն է, որ մեծապես նպաստում է աշակերտի լեզվական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը, իսկ արդյունքը չափվում է նրա բառապաշարով, ֆերականական ձևերի հիշտ գործածությամբ, ուղղագրության ու կետադրության անխալ իմացությամբ, լեզվաոճական միջոցների հանաչմամբ ու գնահատմամբ:
- Դասավանդման մեթոդիկայի հիմնում ընկած են նաև հոգեբանական գործոններ, որոնք պետք է կարևորի և նրբանկատորեն հաշվի առնի ուսուցիչը: Հանձին յուրաքանչյուր աշակերտի՝ ուսուցիչը պետք է տեսնի տարբեր բնավորությունների տեր, զգայուն ու փխրուն արարածների, որոնց նկատմամբ անզգույշ կամ կոպիտ մի բայլը կարող է հանգեցնել անցանկալի, անգամ ֆակտագրական հետևանքների:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավետիսյան Ռ., «Հանրահաշիվ 7-9» ուսուցչի ձեռնարկ, «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2011թ.:
2. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.:
3. Հարությունյան Ն. Կ., Հայ մանկավարժական հանրագիտարան, հ.1, «Հայ մանկավարժության նշանավոր դեմքերը», Երևան, 2007թ.:
4. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, <<Մանկավարժություն>> գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ., N1/2:
5. Նիկոլսկի Ա. Մ., Պոտապով Մ. Կ., Ռեբեանիկով Ն. Ն., Շելկին Ա. Վ., «Հանրահաշիվ 7», «Անտարես» հրատարակչություն, Երևան, 2016թ.:
6. Князева В.В., Педагогика / В.В. Князева. – М.: Вузовская книга, 2016.